հանդերձ՝ որ Հայրենեաց փուշն և խռիւ հաճելի են Ձեր Վեհ ոգւոյն։

Երկս որ շնորհ գտաւ Ձեր առաջ ի լոյս աշխարհ հրապարակ գալու, նա ինձ կը յիշեցնէ, Վեհափառ Հայրիկ, որ Բագրեւանդայ հայոց կեանքը միշտ գաղթականութեամբ անցած է, ուստի դարէ ի դար հարիւրաւոր և հազարաւոր ընտանիքներ գաղթած են. այլ և այլ բարբարոսական հեղեղներ մղած են Բագրեւանդէ դուրս և ով գիտէ, ի՞նչ քստմնելի պատահարներու պատահած լինելով՝ տեղի տուած և աւերակ ու ամայի թողած են բազմահամ աղբերակներու շուրջը տարածած շէն գիւղօրայք և քանի քանի գրաւիչ պատուական գաւառակներ։

Գաղթականութիւնը որչափ կը յիշեմ միշտ վտանգաւոր եղած է, Ղենկթեմիրեան կոտորածէն ետ առաւել. Հայրենի հողէն խլուած ծառի պէս արմատ չէ կարողացած արձակել նոր տնկուած հողի մէջ, վաղ թէ ուշ չորացած է, նա մանաւանդ երբ ունեցած չէ խելահաս պարտիզպան, որ գոնէ մեծ խնամ՝ տանելով մի քանի բողբոջներ աճեցնէր։

Երդ, Վեհափառ Հայրիկ, թողլով